




ՀԱՅԿԱՅԻՆ ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵԼԵԿԱԳՐԱԿԱՆ

ՄԲ ՁԱԳԻՄՆԵՐ

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

ԹԻԻ 69

3/16 ՆՈՅԵՄԲԵՐ 1912

ԿՐՏՆԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵԼԵԿԱԳՐԱԿԱՆ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԵ ՊԱՏՐԻԱՐԺՈՐԱՆԻ

Տ Պ Ա Ր Ա Ն "ԿԱԹՈՂԻԿԷ ԱՐՁԱԳԱՆԳ,,Ի

Ներկայ թիւէս սկսեալ Կաթողիկէ Արձագանգ շաբաթաթերթը լոյս պիտի տեսնէ իրեն սեփական տպարանին մէջ: Տպարանս, զոր բազում զոհողութեամբ կանգնեց Ամենապ. Հոգեւոր Տէր, ըստ բաւականի ճոխ է և օր աւուր միշտ պիտի կատարելագործուի: Արդէն ի վիճակի է սր և իցէ տպագրական գործոց համար թէ ի Կ. Պոլիս և թէ՛ գաւառներէ դիմողները գոհացնելու:

Կը տպուին ամէն տեսակ ծանուցումնք, գիրքեր, տետրեր, հրաւիրագիրներ, քարտեր, քարտ-տետրեր, մանագրքեր ևն., ևն.:

Գիները անմեղքի կերպով աժան են:

Գեղեցկագիտական ճաշակի և տպագրական մաքրութեան կողմանէ ևս յաճախողները անտարակոյս զոհ պիտի մնան:

ՏՊԱՐԱՆ «ԿԱԹՈՂԻԿԷ ԱՐՁԱԳԱՆԳ»Ի

Կ. Պոլիս, Բերս, 5 Պայքաւ փողոց 5

Աւետարանը կարգաւ գիտնար եւ զգուշութիւնը, խոհեմութիւնը ունե-
նար լեզուէն չփախցնելու, տգիտութեամբը որով արդէն օժտուած է,
քանի որ առ հասարակ ստորին արհեստաւոր դասակարգի մարդիկներէն
չյուսացուիր եւ չպահանջուիր գիտութիւն բացի գործին համար պա-
հանջուած կարեւոր քիչ շատ գրել ու կարդալէ — շատ ծանր եւ գայ-
թակղեցուցիչ նախադասութիւններ, որոնք կրնային կուտակօն եւ ուս-
եալ դասակարգին չէնքը քանդել: Այս տէրտէքներուն պաշտօնն էր ժո-
ղովրդեան հետ շարունակաբար շփուիլ, ծուխերուն այցելութիւններ ընել,
ծնածը մկրտել, ամուսնացողը պսակել, հիւանդին հազորդ տանիլ, մեռ-
եալները թաղել, խոստովանութիւն լսել իրենց սովորութեանց համա-
ձայն, երգեցողութիւն ընել, տունները օրհնել եւ իրենց կարգին ալ եր-
բմն պատարագել: Ինչպէս ըսինք, այդ դասակարգէն գիտութիւն չէր
պահանջուեր, հետեւաբար թէեւ առհասարակ բարի մարդիկներ, սակայն
գիտութեան տեսակէտով կատարեալ տգէտ, անուս մարդիկներ էին.
չմոռնանք հոս ալ յարգել բացառութիւնները:

Խեղճ ժողովուրդ, նիւթական կրօնքի մը դատապարտեալ հասա-
րակութիւն, անուանական քրիստոնեայք — բաղմատեսակ միւլութեանց
եւ միւրութեանց հանք: Հաւատոյ լուսոյ պայծառ ճառադայթներէն
դուրի, նիւթապէս, բարոյապէս դժբախտ, առաջնորդուած կոյր հովիւ-
ներէ, տգէտ եւ տգիտութենէ անորժող դասախարակներէ, լոյսը անար-
գող եւ խուարի մէջ մխրճիլ ճգնող վարդապետներէ: Այսպիսի ժողո-
վուրդ մը կրնայ որ եւ է տեսակետիւ յառաջդիմութեան յոյս մը ունե-
նալ: Եթէ դարեւորով տգիտութեան քնոյ մէջ մնայու չսթափի, ամէն չար
կրկն, մսկոտանդութեան, աւելորդապաշտութեան, ծառայէ, անզգալա-
բար բոլորովին հաւատքը կորսնցնելու վտանգաւոր գահավիժին առջեւ
ինքզինք չլիտի գտնայ, ինչ որ երկու հարիւր տարի վերջ ատոր ողբալի
ստուգութեան մենք ալ ականատես վկաներ պիտի ըլլանք եղեր:

Տարիներ, գարուններ, աշուններ իրարու յաջորդեցին. ինչչափ
փոփոխութիւններ, կոտորածներ, ջարդեր, ջրհեղեղներ, ձիւներ եկան
անցան տարաբախտ, նզովից եւ արեան վրէժինգրութեան ենթակայ
Հայ Աղգին գլխէն:

Հակառակ այնքան փափաքանաց եւ զոհողութեանց մինչեւ ցայսօր
գրեթէ ոչինչ օգտուեցան, ի հարկէ պիտի ըսենք Աստուծոյ մասը կայ:
Ճշմարտութեան դէմ գիտակցաբար մաքառողը առաջի աչաց Աստուծոյ
ատեի է: Ներկայիս միթէ հայ ժողովուրդը եւ եկեղեցականութիւնը
հինէն ո՞րքան տարբերութիւն ունի: այո՛, ուսման եւ գիտութեան տե-
սակէտով կրնանք ըսել թէ բաւական դավելի յառաջդիմութիւն մը ունի
հինի հետ բաղդատմամբ. սակայն դժբախտաբար մակերեւութային. որ
եւ ճշմարտութեան ակնադրբութեն բաժանումի ոգւոյն հետ միանալով,
գամ քան զգամ հաւատքի արդէն խարխուլ չէնքը կը քայքայէ, կը

յատակէ : Այսպէս են այն քանի մը պանծացող եւ անուն հանողներն : որոնք ներկայիս մերձաւոր կամ հեռաւոր վանքերէ ելած են , Արժաշու , Երուսաղէմի կամ Էջմիածնի : Քսաներորդ դարուս մէջ արդէն աշխարհական տարրը եկեղեցականաց տգիտութենէն ա'լ զզուած : մղում մը ունի դէպի մոտաւորական զարգացում : Եւրոպական երկիրներ ցրուեցան երիտասարդ , այլ եւ այլ հոչակաւոր վարժարաններու մէջ ընթացաւարտ ըլլալով մարդկութեան օգտակար անհատներ , մեծ անճաւարութիւններ եղան եւ ըլլալու վրայ են , սակայն ժամանակիս քերամը այսինքն բոլոր տիեզերքի վրայ տիրող համաճարակ անկրօնութեան ախտէն վարակեալ , նոյնքան ալ ի չարն զարգացում ունեցան : Արդէն իրենց նախահայրերուն հաւատքը , կրօնքը աւազի վրայ հիմնուած ըլլալով , իրենք ալ նոյն շէնքի թէեւ կերպիւ իւրիւր , փայլուն , շողշողուն , լրացուցիչ անդամները եղած են , բայց եւ այնպէս այնքան հաւատքի եւ կրօնքի մասին մէջ տկար անօթներ են որ թեթեւ հովէ մը կ'իջնան կը փչրին եւ իրենց առաջնորդները տկար կը մնան զիրենք ապահովելու , ուղիղ ճամբու մէջ քաշեցնելու , վասն զի արդէն իրենք ուղիղ ճամբէն բոլորովին շեղած են եւ հինէն կրկնապատիկ եռապատիկ վատթարագոյն : Արդի ամուսնացեալ քահանայք կրնայ ըսուիլ որ մասամբ հինէն գովելի վիճակ մը ունին եւ կամ թէ ունեցողներ քայառաբար կը գըտնուին . իսկ ուսումնական դասակարգը , կուսակրօն պիտի ըսենք , դասակարգը՝ գէթ որոշելու համար , նա մանաւանդ Արմաշի վարդապետները , կենդանի ընդօրինակութիւններն են իրենց ուրացեալ Հօր , տիպարներ՝ ինչպէս հայ թերթիքը կը քարոզեն , կրօնական ծայրայեղ անտարբերութեան եւ կամ անկրօնութեան իսկ , բարոյից ապականութեան , կամապաշտութեան , ունայնասիրութեան , արծաթասիրութեան եւն : Եթէ իրենց բուն իսկ ուրացեալ Հայրը , նախկին Պատրիարք Օրմանեան Սրբազանը , իբրեւ Հայկական եկեղեցւոյ վարդապետութիւն կ'ուրանայ եւ չընդունիր Ս . Պատարագի Խորհրդոյն մէջ հացի եւ գինւոյ Քրիստոսի մարմնոյն եւ արեան փոխուիլը , այսինքն չխոստովանիր գոյացափոխութիւնը , եւ գրեթէ կ'ուսուցանէ Պատարագը լոկ իբրեւ յիշատակ արարողութիւն մը ըլլալը՝ երբ Քրիստոսի վերջին ընթրիքը կը յիշատակէ , ինչպէս Բողոքականներ կը սորվեցնեն , կամ անոր նման բան մը(*) , ուրեմն երբ ինք կը պատարագէ , կոապաշտութիւն կը գործէ եւ ժողովրդեան ալ կոապաշտութիւն ընել կուտայ : Ինչպէս ուրեմն իր գրպոցէն ելած վարդապետք միեւնոյն վարդապետութեամբ պերճացալ Հայ եկեղեցին հիմէն չտապալեն եւ իրենք անկրօն , անբարոյակոն եւ համայն չար կրից ենթակայ ծպտեալ գայլեր չըլլան : Ուրիշ որ եւ է Ս . Խորհուրդներու մասին ալ եթէ առիթը ներկայանայ , միեւնոյն ուրա-

(*) Տես այս յօդուածէն վերջը գրուած Խմբագրութեան ծանօթութիւնը :

ցումը պիտի հրատարակեն պաշտօնապէս, ինչպէս զիտենք թէ խորհուրդներէն եւ հաւատոյ էական մասերէն գրեթէ եւ ոչ մէկուն չեն հաւատար. Ս. Խաչը կը հայհոյեն. Ս. Աստուածածնի ամենամեծ խորհուրդներն ու փառքերը կ'ուրանան, որով ակն յայտնի կ'երեւի թէ արդի հայ եկեղեցականութիւնը անհաւատութեան անդունդին մէջ ի կորուստ կը գտնուի:

Հետեւարար ժողովուրդն ալ եթէ բացարձակ կերպով չհետեւի այնպիսի դժոխային վարդապետութեանց, գէթ վարակեալ կրնայ համարուիլ: Եւ այն է պատճառը թէ ինչո՞ւ արդի հայ ժողովուրդը նիւթականապէս քրիստոնէութիւն կը դաւանի, եւ իրենց գործերը Քրիստոնէութենէն հեռի են: Աւա՛ղ, բիւր աւա՛ղ: Այս էր ուրեմն Ս. Գրիգոր Լուսաւորչի իրենց աւանդած հաւատքը, կրօնքը. թող լուսաւորչական սրբազան անունը բերաննին չառնուն եւ իրենց բուն իսկ իսկութիւնը յայտնող անունով յորջորջուին, այսինքն հակասակաց-հայք կոչեն զիրենք:

Սակայն ինչպէս երկու հարիւր տարի առաջ, հիմա ալ դարձեալ էջմիածնական Հայ-Եկեղեցին ընդհանրապէս սպականեալ չէ. կայ մաս մը որ տակաւին հաւատարիմ է Ս. Հարց հաւատքին, բաղմատեսակ սակայն անկանոն շեղումներով: Եւ իրեւ թէ ընադդարար կը խորշի միշտ Ուղղափառ Ս. Եկեղեցւոյ վարդապետութեանց պայծառ լոյսէն:

(Շարունակելի)

Կատարելապէս իրաւունք ունի հեղինակը՝ դատապարտելով Օրմանեանի ի մասին Ս. Հաւատոյ ամենամոլոր վրիպանքն ու ապերտօսն խարդաւանքը: Օրմանեան ահաւոր ոճրագործ մըն է որ կը սպաննէ հոգիները իր մոլորական հրատարակութիւններով. կ'երեւի թէ նախանձեր է Բողոքականութեան հիմնադրին քստմեկի տեղումն եւ կ'ուզէ ամէն գնով Լուսերն բլլալ Հայոց. մի առ մի, անզգապէս, դեղերփնեան գոյներու ներքեւ կը քննադատէ, շնական իմաստակութեամբ դադաագողի կը ծանակէ, վերջապէս կ'ուրանայ սուրը կրօնքի ամէնէն զլխաւոր ճշմարտութիւններէն շատերը, վարդապետութիւնները, հաւատքը. որ մը Վեբափոխումը, ուրիշ որ մը Քրիստոսի Եկեղեցին, դարձեալ Ս. Հաղորդութեան մէջ Քրիստոսի իրական ներկայութիւնը, եւն. կը ճգնի բանապաշտ (rationaliste) դարձնել Հայ Ազգը, հիմն ի վեր տապալելով անոր՝ դարերէ ի վեր հաւատացած եւ իր նախնեաց միակ ժառանգութիւնը եզոզ Ս. Հաւատքին ամբողջ շէնքը: Իր հրատարակած Համապատումին մէջ, որ իրեւ թէ Քրիստոսի Որդւոյն Աստուծոյ Սուրբ Աւետարանին բովանդակութիւնը պիտի բլլայ, իր մոլորութիւններն յամառարար ներմուծած է. քանզի ինչպէս որ դատախօսութեամբ էջմիածնական եկեղեցականաց ոմանց հաւատքը խախտեց, այսպէս ալ կը ճգնի, որպէս զի խեղճ ու տգէտ ժողովուրդը՝ Աւետարանի կենսապարզեւ ջուրը խմել կարծելով, մոլորութեան մահաբեր թունով վարակուի եւ խալթուի մոլորութեան օձէն որ ամենատուրը վարդապետութիւններու ծաղկաւետ մարգագետինն մէջ թաքուն է: Իր Համապատումին 261 յօդուածին մէջ (էջ 723-728, Հմմ. նաեւ էջ 296-7) Աստուա-

Մատթեոսի ԺԶ. դիտոյն մէջ Քրիստոսի առ Պետրոս բացարձակապէս ՄԱՍՆԱԻՌԱԾ ԵՐԱ-
 ՆԻՔԻ, վէմը, յաղթութիւնը, իօխանութիւնը միւս առաքելոց ալ կը նոյնացնէ,
 յիշատի Ս. Աւետարանը բովանդակելով, Աւետարանը որ շա՛տ ուրիշ տեղեր ակն-
 յայտնի կը հաստատէ այս ճշմարտութիւնը, ինչպէս Պետրոսի ՄԻՇՏ առաջին ան-
 ուանիկն ու բլլալը. ինչպէս «Հաստատեցես զեզբարս ք» Աստուածային խօսքը
 (Ղուկ. ԻԲ. 34-32), ինչպէս (Յովհ. ԻԱ. 45, 47) ԱՐԱՄԱՆԻԵՐԸ, ինչպէս Գործոց Ա. 45, Բ.
 44, Գ. Դ. 3, 8, 45, 29 ևն., ևն.) Աստուծոյ և ասանց նմանները արտաքին ՏԱՐԱԲՈՐ
 պարագաներ չեն: Ինչպէս՝ ի մասնաւորի, կրնայ ըսել Օրմանեան թէ Քրիստոսէն Պետ-
 րոսի տրուած ԿԵՓԱՍ (Վէմ) մակնութեանը աստուածային նախադիտութեամբ չէ,
 ըսել է Քրիստոս, Աստուծոյ որդին յանխորհուրդս և անպատակ փոխեց Սիմոնի ա-
 նունը ի Կեփաս կամ Պետրոս: Հակառակ ուղիղ բանի, և արեւելեան ու արեւ-
 մբանեան եկեղեցւոյ դաւանութեան և հարց ու վարդապետաց ընդհանուր ուսուց-
 ման, Օրմանեան ա՛յսպէս կ'ուզէ. «Սիմոնի Պետրոս կոչուիլը ԴԱՆԱՆՈՒԹԵՆՆԷ ԴՈՒՐՍ
 ու եւ է պատահական կամ կամայական պատճառ: մը մէջ փնտելու է», (Էջ
 326-7): Ահա պատճառը, ընդդէմ ամենագէտ և նախախնամ Որդւոյն Աստուծոյ, Ապա
 կը շահատակէ ընդդէմ Առաքելապետին և ընդհանուր եկեղեցւոյ Ս. Հոյրերն ալ իր
 մոլորութեան մասնակից կը հռչակէ (Էջ 327) և դեռ ուրիշ հայհոյութիւններ: Եւ
 ճարպիկ անպարտի մը պէս ուր որ անել տեղ մը գայ, կը պրծի ըսելով (ինչպէս
 գոյացափոխութիւնը ուրանալէն վերջը). «Մեզի ալ աւելի խնդիրներու մօտեկ
 աւելորդ կը դառնայ, քանի որ աստուածաբանական հասոյ մը կազմել չէ
 նպատակն», (Հմ. ի մէջ ալոց էջ 728): Սակայն և այնպէս այս շուրջ հազար
 էջերով ասուար հատորին մէջ, տեղագրական, պատմական, ազգագրական, ևն. ան-
 նշան մանրամասնութեանց վրայ ընդերկար ճառող մը, ինչպէս կ'ըլլայ որ ահաւոր
 ճշմարտութեանց վրայ Ժողովուրդը լիապէս լուսարանելէն կը խորշի կը վախճայ ուրեմն
 Օրմանեան ճշմարտութեան փաստերը մինչեւ ցվերջ հետապնդելէ... հարկա՛ւ, քոնդի
 գիտակցաբար կը գրէ, քանզի ինք քա՛ջ գիտէ թէ սուտ կը խօսի, մոլորեալ եւ մո-
 լորեցուցանէ, ինք քա՛ջ գիտէ թէ ինչ են իւր կեղծած, գարբած ու սորվեցուցած
 մոլորութիւններուն ջախջախիչ պատասխանները, զորս գիտունները կերպով կ'ը
 ԼՈՒԷ և իբր Փարիսեցի խոյս կուտայ հոգւոյն ազանջները խցելով ... յիւր գատապար-
 տութիւն. ,,ի դառնութիւն մաղձի եւ ի կնքիւն անիրաւութեան տեսանեմ
 զքեզ,, (Գործ. Ը. 23): Ահա ասոր համար է որ մենք Ս. Գրեգոր Լուսաւորչի քարո-
 դած հաւատքը խախտողներու խօսքն բրած էինք Արձագանգի մէջ, (Տես թիւ 50,
 էջ 339-344). կը փափաքէինք որ մեր ընթերցողները սոյն հաստուածը կրկին ընթեռ-
 նուն: Այ՛ս ալն եկեղեցւոյն որ այսպիսի մոլորութիւններ կ'ընդունի, կը փառաբանէ.
 որքա՛ն տւաղի վրայ շինուած է այդ եկեղեցին... Օրմանեան կաթոլիկ ծնած է և
 անո՛ւ անոր երկնաւոր վարդապետութեամբ. Օրմանեան կաթոլիկ կրօնաւորական կար-
 դի մը մէջ տարիներով կրօնաւորած, ուր և երդում կատարած է. Օրմանեան կաթո-
 լիկ քահանայ եղած է և հազարաւոր անգամներ Պատարագին Ս. Զոհը մատուցած,
 Օրմանեան աստուածաբանական ուսմանց մէջ շատ փայլուն հանգիստացած է և այն
 ճշմարտութիւնները, զորս հիմայ կա՛մ կը վտանգէ, կա՛մ կ'ուրանայ, ՏԱՐԻՆԵՐՈՎ
 պաշտպանած է, յարբուն հասած գիտնականի մը վիճակով և ձեռնհասութեամբ և
 ամբողջ կրօնով: Օրմանեան այն ատեն եթէ այդ ճշմարտութիւններուն չէր հաւա-
 տար և սակայն կը պաշտպանէր ու կը քարոզէր, ուրեմն սոսկալի կեղծաւոր մըն էր
 «քեմին ներքեւ և իր իսկ խօսքերով», «նիօղ տալքն է Յիսուսի վայելքը իր գլուխը

Կարդալու,, (Էջ 887): Իսկ եթէ այն ատեն կը հաւատար անոնց, ուրեմն հիմայ
Բնչպէս որակելու է զինքը: Բայց գոնէ իր եկեղեցական տարազէն պատկառի, գոնէ
խղճայ խեղճ ժողովրդեան վրայ: Իսկ իր խեղճը, վերջապէս չպիտի զարթնու այս խեղ-
ճը, ահեղ և սարսափալից, միթէ՞ իրեն համար ալ պիտի ըսուին իր սա տխուր խօս-
քերը: „տեսնալն ժամեր կ'անցնէ մասնիչ առակերս. միտք կը
տուարի. բայց չարութեամբ եւ չարաճախութեամբ եւ պաղարեամբ
մեղանշորը, դժուար է քէ ուղիղ դարձ մ'ունենայ. նահիճի մէջ ին-
կածի նման, նա քանի կը յուզուի, աւելի կը խրի, քանի կ'այլայլի աւե-
լի կը քաշուի,, (Էջ 884): Բայց այդ Պետրոսը զոր Օրմանեան կը նկրտի Քրիստոսի
Որդւոյն Աստուծոյ հաստատած Աթոռէն վար առնուլ, ըսած է ակնարկելով իւր
անոխակալ եւ բարեգութ Տիրոջ անսահման գթութեանը. „**ՁՅ** Խառն երկայնմանու-
րիւնն փրկութիւն համարեալիք,, (Բ. Պետր. Գ. 45): Բայց ահաւոր է Որդին Աս-
տուծոյ, երբ արհամարհուի ի սպառ. ո՞ր վտան նոյն Առաքեալն ըսաւ Սիմոն մոգի.
Արժաք քո քնդ քեզ լիցի ի կորուս... քանզի սիրք քո ոչ է ուղիղ առաջի Աստուծոյ: Ա-
պաւառեա՛ր դու ի չարեացդ քոց յայդցանէ, քերես քողորթիւն լիցի քեզ ի մեղմեխ խոր-
հորդոց արտի քո,, (Գործ. Ը. 20-22): Եւ Յիսուս զսուաց. „Յիւսէ՛ր ուստի անկարն եւ ապա-
ւառեա եւ զառաջին գործան քո արա՛, ապա քէ ոչ գամ եւ ՎԱՂՎԱՂԱԿի,, (Յայտ. Բ.
5) „Դու ունիս զվարդապետութիւն Նիկողայեցեաց զոր եւ ասեամ: Արդ ապաւառեա՛ր,
ապա քէ ոչ՝ գամ ՎԱՂՎԱՂԱԿի,, (Անդ. 45-46 Հմտ. Գ. 4-3 Կն.):

Ծան. Խմբգր.



Ա Ռ Ա Մ Ե Ն Ա Պ Ա Տ Ի Ի

ԳԵՐԵՐ ԶԱՆԻԿ ՀՈԳԵԻՈՐ ՏԷՐՆ



„Վաթի ալիքներու մէջէն
„Նաւակդ վարէ,
„Տէրը պիտի պսակէ,,:

Ու արսունէ քեզ հեթանոս ազգերուն
Ընտի՛ր անօր՝ զոչեց ձայնը երկնային.
Ելիւ, կանգնէ՛ աշխատակից Կեփային.
Եւ արածէ՛ անունս՝ համբաւս ալ հեռուն:

Տօն, ցնծութիւն, համակ ծաղիկ եր այն օր,
Ժողովուրդներ ելած ոտքի, ու ազգեր,
Եւ ու գեղով հովիւդ քաջ անվեհեր,
Ողջունեցին խնկով, երգով նորանոր:

Նահասակ մ'էր սպիներով գերապանծ
Պատերազմած արդար կոխը ազգին.
Որուն երկինք դէկը կուտար խնդալին
Չուառներու՝ անձկոս վայելիքն անանց:

Առաքեալ մէր զոր պերճափունք Վոսփորի
Վայելելու ոսկի տնայով զմայլած
Դռնութիւններ վերն ուղղեցին առ Աստուած.
Հովն ու ալիք, կայքեր առին բերկրալի:

Բայց ինչ հոգին վե՛ր շատ վեր այս տներէ,
Ինչե՛ր տեսաւ, ինչե՛ր պահուած ո՛ր քառուն.
Այդ կեցցեցներն, արդեօք որ մ'ալ անկայուն
Ժողովուրդքն, անկցինե՞րն ալիս՝ փոխէ:

Եւ ո՞ր սակայն հիւղ հետեւող մեր փրկչին,
Կրնար մոռնալ անոր խօսքերն անարկու.
Հալածումն ալ չէ՞ կնիքը անձերու,
Որոնք ուղիղ ճանապարհէն բալեցին:

Մղէ՛ յառաջ, մղէ՛ մակոյկդ անխորով,
Խոժոռ ամպեր զո՛ւր երկինքը կ'սփռեն,
Զո՛ւր կոհակներ ելած ովկեան խորերէն
Կ'սպառնան զո՛ւր. քաղէ՛ Փրկչիդ կարօտը:

Անշարժ վեմէն առած ոյժերդ ամսասան,
Քեզ ո՛ր հողմեր կամ ո՛ր ծխանք են կարող
Սզողել սարսափ, դրոշմել սրիդ ահ ու դող,
Դուն միշտ պէտն ես Հայ Կաթողիկ հանրութեան:

Արեւու մէջ տառով ոսկի է գրուած
Քո անունը, անցինջ անցինջ պիտ մնայ,
Ասելութիւն, յիս էեն ի զուր քո վերայ
Պարպեն պիտի դառնն մրրուր սեւաման:

Օր մը այո՛ր որ մը պայծառ պաշտելի,
Ամէն ճամբայ պիտի դիւրի քո առջին.
Եւ սիրալիր որդիներուդ մէջ կրկին
Ապրած խաղաղ, զեղուս օրհնէնքը երկնի:

Ու հրեշտակաց հիւսած պրսակն անթառամ
Վճի փողփող աղամանգովը յեռած,
Վերջ մեր սիրոյն պիտի երթաս առ Ստուած,
Վայելելու, մինչ ի տեսիլ միւսանգամ:

Երբ պիտի գանք մենք ալ ըլլալ քո պսակ
Մենք քո վճիղ պահառ, երկունք ցաւերուդ,
Ազատ յայնժամ ալեծուփէն ո՛ր անգութ
Ուրախութեան հոսանքն ըմպենք անապակ:

Յ. ՀԻՒՐՄԻԻԶ

Վ Ի Ե Ն Ն Ա Յ Ի

Ս. ՀԱՂՈՐԴՈՒԹԵԱՆ ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԺՈՂՈՎԸ

(Շար .)

ՓԱԿՄԱՆ ՆԻՍՏԸ

Համաժողովին չորրորդ ու վերջին նիստը տեղի կ'ունենար Սեպտ. 14ին կէս օրէն վերջը, բայց առաւել կանուխ ժողովականներու ստուար բազմութիւնը խումբ խումբ կը զիմէր ժողովասարհը, հակառակ հեղեղանման անձրեւին, իրենց տեղերն ապահովելու համար :

Արդէն փողոցներն ու շէնքերը համակ զրօշազարդուած են վաղուան թափօրին համար . յաղթական կամարներ բարձրացուած են շատ տեղեր, բայց տեղատարափը զգեանաւ, աւրած է անոնց մեծագոյն մասը : Եւ սակայն ի՞նչ հոգ այս ամէնը . հաւատացեալները ամէն ազգէ եւ ամէն լեզուէ լեցուած են դուրսը, խանդավառ, բորբոքուած Ս. Հաղորդութեան անշէջ կայծերէն :

Ժամը 11ին՝ 30,000 հոգիէ աւելի բազմութիւն մը հաւաքուած էր արդէն Գմբեթադրի ներքեւ : Վեհաշուք էր տեսարանը . եւ ոչ մէկ փոքր անկարգութիւն չէր տեսնուեր . ոտթիկանութեան ցոյց տուած աչալըջութիւնն ու գործունէութիւնը վեր էր ամէն զրուատիքէ :

Արքունիաց յատուկ օթեակին մէջ կը տեսնուէին Ն. Կ. Բ. զահաժառանգ արհիւղաւոր իւր ներկայացուցիչ թագաւոր-կայսեր . իր ափինոջ հետ միասին . չրջապատուած ուրիշ շատ մը Արհիւղաւորներէ, կոմսերէ, իշխաններէ եւ ազնուազնականներէ :

Նախագահական օթեակին մէջ էր Կարգինալ Վան Ռօսսում իր շուրջն ունենալով միւս կարգինալները :

Ուրիշ օթեակի մը մէջ ալ բազմած էին 450 Արքեպիսկոպոսներ եւ Եպիսկոպոսներ :

Հաղիւ թէ Առաքելական պատուիրակը հնչեցուց նախագահական զանգակը՝ իմաց տալու համար թէ նիստը բացուած էր, մէկէն ամէն լեզուէ հաղաբաւոր խանդավառ գոչեր մը թռան : Գերմաններու հօխ աղաղակին կը խառնուէին հունգարական ելիէն, Սլաւներու վիպօւն եւ ձիվիօ, Իտալացուց եվիվիվա, Ֆրանսացուց վիվ, Անգլիացուց հուռնաւ եւ հայկական կեցցե՛ աղաղակները :

Միանուազ համաշունչ ողջոյն մըն էր զոր հոն հաւաքուած ժողովուրդները կ'ուղղէին Կայսերական Տան ներկայացուցիչներուն, Քահա-

նայապետական Պատուիրակին, ներկայ կարգինաշներուն եւ Արքեպոս-
ներուն եւ Եպիսկոպոսներուն՝ Հաղորդութեան Համաժողովին համար ա-
նոնց թափած անխնայ ջանից փոխան եւ որոշ յաջողութիւնը կը գերա-
զանցէր ամէն ակնկալութիւն :

Սանդալառ ցոյցերը դադրելէ վերջ, իւրաքանչիւր մասնակի նիս-
տերու մէջ արուած որոշողութիւնները ընդհանուրին հաւանութեան
յանձնուեցան տեղեկարարներու կողմէ :

Յետոյ Յիսուսեան մը, Հ. Քոլլա, ճառ մը արտասանելով շնորհա-
կալութիւն յայտնեց Ս. Քահանայապետին՝ իր օրհնութիւնը զրկած ըւ-
լալուն համար Համաժողովին եւ զոր ծափերով ողջունեցին ներկաները :
Եւ խոկոյն հետեւեալ բանաձեւը կարդացուեցաւ մի՞ծ խանդավառութեան
մը մէջ :

«Ս. Հաղորդութեան ԻԳ.դ Համաժողով, ճնորհակալութիւն կը յայտնէ Ն. Ս. Վե-
հաբոյ Քահանայապետին Պիոս Ժ.ի, խոնարհ ակնածանօք, Ս. Հաղորդութեան վրայով
իմէ տուած հրամանագրոյն համար : Համաժողովը յոյժ ազդեցիկ միջոց մը կը նկատե-
զան՝ դարուս վերելեուն համար : Եզոր ազդակ մը՝ մանկանց անմեղութեան համար եւ
կորովի միջոց մը՝ Բիսպէլութեան ունեացման եւ բարգաւաճման համար : Ս. Հաղոր-
դութեան Համաժողովը կը հաւաքէ բոլոր ձեռնմաս վարիչներ, իրենց բոլոր ուժովն ու
եռանդովը ի գլուխ հանել ետեւ համար սոյն հրամանագրոյն կատարեալ գործադրումը :»

Ընդհանուր ծախահարութեան մէջ միաձայնութեամբ ընդունուեցաւ
սոյն բանաձեւը : Որմէ վերջը խօսք առաւ Վալէնտինայի [Սպանիա] Արհի.
Արքեպիսկոպոսը սպաներէն լեզուաւ ճառ մը արտասանելով յանուն
Սպանիայի կաթողիկէներուն : Յուզեալ շեշտերով կը բացատրէր ան՝ իր
սքանչացումը Համաժողովին գեղեյիկ յաջողութեան համար, եւ յար-
գալից ողջոյն մը կ'ուղղէր Հաղորդութեան Կայսերական ընտանեաց եւ
Սպանիոյ Արքայական Տան, ի մասնաւորի Մարիա Բրիտանիա Մայր Թա-
ղուհոյն՝ որ աւստրիական տան փառաւոր շառաւիղներէն էր (մեծա-
ղղորդ ծափեր) :

Կարգինալ Ամէթ, իր կարգին Քրանսերէն լեզուաւ շնորհակալութիւն
յայտնեց Կարդ. Նակլի եւ Համաժողովին կարգադիր յանձնախումբին՝
հանդէսին փայլուն յաջողութեան համար եւ պարզեց Քրանսացի կաթո-
ղիկէներու ջերմ համակրութիւնը Աւստրիոյ-Հունգարիոյ եւ անոր ժողո-
ւո՞րդներէն հանդէպ : Եւ վերջացուց փառաւոր ներդրեան մը հիւսե-
լով Կայսեր ու կայսերական գերդաստանին հասցէին՝ Բրիտանիալութեան
պատուարը յորջորջելով զանոնք :

Մոլեզին ծախահարութիւն մը զգրդեց ամբողջ սրահը եւ երբ ճա-
ռախօսք վար իջաւ բեմէն՝ Կարգինալ Նակլ ողջագութեց զանի ի շնոր-
հակալութիւն եւ առաջնորդեց իր տեղը :

Վերջապէս ոտրի ելնելով Առաքելական Պատուիրակը, Կարդ. Վան
Ռօսսուտ, հիանալի պերճախօսութեամբ փակման ճառը արտասանեց, ուր

նախ յուզեալ շեշտերով Համաժողովին լիուլի յաջողութեամբ պահուելը շեշտելէ վերջ, սրտաբուզի շնորհակալութիւնները մատոյց Ս. Նրորդդուլթեան, Ամենասուրբ Հաղորդութեան եւ Տիրամօր կուսին:

«Մեր ընդհակալու զգացումները դէպի երկինք առաքելէ վերջ, ակնարկինս դէպ ի երկիր ուղղենք:

Յալիսենական Քաղաքին մէջ կ'ապրի գերագոյն անձնաւորութիւն մը՝ որու հոգին միացած մնաց մեզ հետ այս օրերուն մեծարելու համար այն Աստուծո՛ր՝ որ կը բախէ հացի տեսակներուն ներքեւ, եւ որու սիրք կը բաբախէ մեր սիրտերուն հետ սիրոյ ստեղծ սրտայայտմով: Ան է արքայական մեծ Բահանան, ներկայացուցիչը աստուծային մեծ Քահանային, Մարդացեալ Աստուծոյ՝ Յիսուսի Քրիստոսի: Բայց ան միեւնոյն պահուն մեր սիրտերով հայրն ալ է, որ հայրական զորովով հսկեց մեր վրայ այս օրերուն, որ օրհնեց մեզ եւ օրհնեց այս Համաժողովը:»

Յետոյ յարելով թէ ինք հաւատարիմ թարգմանը պիտի ըլլայ Ս. Քահանայապետին քով Համաժողովին զգացումներուն՝ յարեց.

«Բայց հոս Վիեննայի մէջ եւս ընդհակադրութեան տուի մ'ունինք հասուցանելու. ուսի ցնծալից խանդավառութեամբ առաջին խօսքը կ'ուղղենք ինչպէս Ս.Հոր՝ այսպէս ալ այն մեծ վեհապետին որ աւելի հայր մըն է իր ժողովուրդին, քան անոնց կայսրն ու քաղաւորը. անոր՝ որ ասպետական արժանապատեւութեամբ, քրտածար եւ հաստատման բարձր բռնեց մեր վրայ այս օրերուն մէջ, իր պաշտօնական վահանը: Աշխարհի առջեւ ցոյց տուաւ Ան՝ փառաւոր օրհնելով մը թէ Հապսպուրկեան Տունը փոխուած չէ ժամանակին հռչակմամբ, այլ միշտ մնացած է ծայրը՝ որու վրայ անկիւսակ դարեւ ի վեր կը հսկէ Ս. Հաղորդութիւնը, եւ ուր խոր ու մեծ յարգանքով պատուուած է ան:»

Եւ այսպէս կարգաւ շնորհակալութիւն յայտնելէ վերջ ներկայ կարգիւնաւորներուն, Արքեպիսկոպոսներուն, եպիսկոպոսներուն եւ ի մասնաւորի Վիեննայի արքեպիսկոպոս Կարդինալին, ինչպէս նաեւ բոլոր ազնուապետական կարգին, կարգադիր Յանձնախումբին ու բոլոր հոն հաւաքուող ամէն ազգի հաւատադիւաններուն՝ յարեց.

«Եւ այսպէս տոգորուն ջերմեռանդութեան խորին զգացմամբ առ Ս. Հաղորդութիւնն պիտի փակենք վաղը այս Համաժողովը՝ Ս. Հաղորդութեան մեծ քափօռով մը: Ի փոխարէն այս մոռացութեան ու արհամարհանաց որու նշանակ եղած է շատ մը տեղեր մեր Փրկիչը՝ ի հաւուցումն մեզ հանդէպ Յիսուսի ցոյց տուած անհուն սիրոյն, վաղը իրեն պիտի պատաստենք ալմայիսի յաղթանակ մը՝ որու նմանը քերելու իրեն բնաւ եղած չէ ցարդ: Ընդհանուր աշխարհի առջեւ մենք ամենինս ալ, կենդանի հաւատով եւ սիրագեղ ջերմեռանդութեամբ զինք կը ճանձնանք իբր մեր քաղաւորը, իբր մեր Աստուծո՛ր եւ որու կը ձօնենք սէր, պատիւ ու ընդհակադրութիւն:

Յետոյ յանձնարարելով ըստ ամենաքիչ պատկառ կենալ Մանուել խուրի կարգադրութեանց եւ ամփոփ մտքով ներկայ գտնուել հանդիսին՝ կը շարունակէ հետզհետէ աւելի ոգեւորուած հրաժեշտի ողջոյնը տալ բոլոր հոն ներկայ գտնուողներուն իւրաքանչիւրին ալ յիշեցնելով թէ ինչպէս պէտք է պողարներ ընել Համաժողովին որոշումները ու կը վերջացնէ ըսելով.

«Հաստատաբար յառաջ դիմենք Հռոմի հետ միասին մեր սուրբ հաւատքին մէջ, հաստատաբար՝ Կաթողիկէ եկեղեցւոյ մէջ, հաստատաբար՝ Ս. Քահանայապետին հետ, հաստատաբար՝ Հաղորդութեան խորհրդոյ մէջ:

Այո՛, քանի որ Ս. Հաղորդութիւնը հիմն է եկեղեցւոյ, հիմք մարդկութեան, Ան է աղբիւր լուսոյ, ջերմութեան, կենաց, կարգի, միութեան...: Աստուծոյ շնորհքը, օրհնութիւնը, պատգամութիւնը՝ իջնեն իշխանին ու ժողովուրդին վրայ, ամեն անոնց վրայ՝ որոնք կը նանչնան յԱստուծոյ Հայր՝ իրենց Տէրը, իրենց Վարդապետը եւ ի Յիսուս Քրիստոս իր Որդին՝ իրենց Փրկիչը, ամեն անոնց վրայ՝ որ կը պատուեն զանի Սիրոյ մեծ խորհրդոյն մէջ:

Այսպէս Ս. Հաղորդութիւնը բոլ ըլլալ լուսոյ, կենաց, երջանկութեան արեւը, Աստուծոյ բոլոր ժողովրդոց համար եւ այսպէս իրականացալ ինչ որ այնքան գեղեցիկ կը ճնշէ ձեր ժողովրդային փայլեցիկն մէջ:

«Աստուծոյ արեւը կը շողայ խաղաղ՝ երջանիկ Աւետարան մը վերեւ»
(Շարունակելի)

ՄԱՐԴԿՈՒԹԵԱՆ ՓԱՌՔԵՐԸ

ՆԱԽՍԱԲԵՓ ՄԻԳԸՆ (*)

Գ.

Կը տեսնէք թէ ի՞նչպիսի գերբնական ուրախութեամբ կը գլխիկն հաւատացեալը Ս. Պատարագի, եւ տակաւ խորհրդաւոր զօրութիւն մը կը մղէր գլխիկն հաւատալու Ամենիս. Հաղորդութեան: Իւր մտաց մէջ կը յեղեղէր յաճախ Առաքելոյն վճիռն, եւ միշտ աւելի կը հաստատուէր այն համոզման մէջ թէ «իրական եւ նշանաբան ներկայութեան» եւեթ կրնայ պատշաճիլ այն. «Այսուհետեւ որ ուտիցէ զհացս կամ ըմպիցէ զքաժակս Տեսնենք անարժանութեամբ, պարտական եղիցի մարմնոյ եւ արեան Տեսնենք Փորձեցէ մարդ զանձն իւր, եւ ապա ի հացէ անտի կերիցէ եւ ի բաժակէն արբցէ: Զի որ ուտէ եւ ըմպէ անարժանութեամբ, զատառտան անձին իւրում ուտէ եւ ըմպէ. զի ո՛չ խորէ զմարմինն Տեսնենք» (Ա. Կորնթ. ԺԱ. 17)

Ֆիլիպպի եղբարք իրենց կրօնքին սէրն ու գիտութիւն ունեցող քրիստոնեաներ էին, եւ բողոքական հեղինակներու ամենէն կարեւոր առարկութեանց կը պատասխանէին միշտ յաղթական կերպիւ: Իրենց ջերմանալն ու հմուտից խօսակցութիւնք բնական է թէ մեծապէս օգտա-

(*) Տե՛ս թիւ 62, էջ 538:

կար պիտի լինէին այնպիսի մտքի մը որ անտեղի զօռարութիւններ , հնոտի կամ նորակերտ առարկութիւններ չէր խնդրէր յիշտ կրօնի , ճշմարտութիւն եւեթ՝ եռանդնալից եւ անկեղծօրէն , որչափ որ հնար է մարդկային բանականութեան տեսնել զայն իւր մարմնոյ բանալին մէջէն :

Կ'զգար թէ տաժանելի պիտի լինէր իրեն թողուլ կրօնը մը յորում ծնած ու մնած էր ցայն վայր , եւ որում կապուած էին իւր կենաց սիրելագոյն յիշատակներն անմոռանալի : Կրօնի փոխութիւն մը՝ կեանքի եւ ընկերային յարաբերութեանց ահագին յեղափոխութիւն մ'է գրեթէ միշտ , եւ քիչեր կան որոց համար ճշմարիտ մարտիրոսութեան մը չ'փոխուի այն . երախտագէտ եւ գերազանցօրէն զգայուն հոգիներու համար մանաւանդ՝ որոնք բարեկամներ ու բարեբարներ կը հաշուէին իրենց նախկին կրօնին մէջ՝ մահուան տաքնասներու համեմատութիւն կառնույաճախ : Բայց կ'զգար նաեւ թէ չափազանց վսեմ է լուրջ անձի մը համար կրօնի ճշմարտութեան խնդիրն , որոյ հետ չեն կրնար գալ ի կշիռ համեմատութեան մարմնոյ եւ արեան ձայնին բոլոր . ուստի լոկնելով իւր մէջ ինչ որ կար տակաւին կարի յոյժ մարդկային , եւ մարտնչելով իւր իսկ տկարութեան զէմ , կը բարձրանար սրաթռիչ դէպ ի պայծառ հորիզոններն գերբնական եւ գերերկրային մտածութեանց , եւ կ'առաջագրէր սիրել եւ գտնել ճշմարտութիւնն եւ ի գին ամենայնի անձնուրել անոր մինչեւ ի մահ : Իւր հոգւոյն պարզութեան մէջ կը կրկնէր անձանձրոյթ բանաստեղծին մաղթանքն յուզիչ եւ խոնարհ .

«If I am right, thy grace impart

«Still in the right to stay.

«If I am wrong, teach, oh! teach my heart

«To find the better way.»

« Եթէ , ո՛վ Տէր , ճշմարտութեան մաքուր ժամբուն մէջն եմ արդ :

« Թող պարգեւէ շնորհքդ ինձ կալ ի նըմին միշտ հաստատ :

« Իսկ ի վրիպանս եթէ եմ ես , ո՛հ ուսո՛ղու իմ սըտիս

« Դըտնել զուզին լուսապայծառ ճշմարտութեան քոյ յաստին : »

Եւ որովհետեւ լոկ պղատմական բաղձանք մը չէր այս , իւր կամքին եւ իմացականութեան բոլոր ոյժերով կ'աշխատէր ճամբուն վրայէն ամեն արգելք ու խոչնդոտ բաճնալու : Կ'աղօթէր , եւ ինչպիսի ջերմեռանդութեամբ , բայց աղօթելով չէր շատանար : Որովհետեւ տգիտութիւնն է մեծագոյն թշնամի մը յիշտ կրօնի , —ինչպէս կը տեսնենք զբժբաղդապէս ամեն օր — , կ'ուսումնասիրէր անխոնջ՝ յաճախ գիշերուան հանգիստն իսկ զոհելով՝ ընտիր գրուածներ , հոգեւոր եւ Աստուածաբանական երկասիրութիւններ , կը բաղդատէր միմեանց հետ ուղղափառ եւ ոչ-ուղղափառ սկզբունքներ , անձնական խորհրդածութեամբ կը ջանար խորը թափանցել իրաց եւ վարդապետութեանց , եւ իւր հոգին կը

գոչէր. «լոյս, աւելի լոյս» ո՛չ կէօղէի մը մնափառութեամբ, այլ անկեղծ քրիստոնէի մը խոնարհութեամբ եւ պարտաճանաչութեամբ:

Ուղիղ սրտերու չմերժեր Աստուած ծագել ճշմարտութեան արեւն կենսայորդ, բայց սա ժամանակ մի թոյլ կուտայ մոլորութեան զիջել մերթ ընդ մերթ անոր թշուարիքը սեւ ամպեր, որք անհնարին տառապանք պատճառելով ճշմարտասէր հոգւոյն, եւս քան զեւս կը մաքրեն եւ արժանեօք կը ճոխացնեն զայն: 1804ին Նիւ-Եօրքէ գրած իւր նամակներուն մէջ սոյն ճնշիչ տառապանքը կը պատկերացնէ զգայուն պերճախօսութեամբ: Օրեր կային յորս Աստուծոյ լքուած լինելու փորձութիւնն իսկ եկաւ չարչարել զայն: Բարեբաղդապէս իւր զղջման սաստկութիւնը նշան մ'էր թէ չէր կորուսած նա Աստուծոյ բարեկամութիւն: Աւասիկ իւր անկեղծ յայտարարութիւնը. մի մոռնաք որ զեւս բողոքական մ'է որ կը խօսի. «Այն աստիճան տողարուած եմ մեղքերուս ցաւով, որ ուրիշ ամեն ցաւ ուրախութիւն է անոր քով: Այն զմեզակ ու բազմապատիկ փորձերուն մէջ զոր հաճեցաւ Աստուած զրկել ինձ, մի բանէ միայն վախցայ միշտ, — իւր չնորհքը կորուսանելու զժողովութենէն» —

(*) Սոյն խօսքերն իրենց կարճութեան մէջ անսահման լոյս կը տիօեն այդ չքնաղ եւ գեղեցիկ հոգւոյն վրայ, յորում ամեն բանէ վեր փայլեցաւ միշտ խղճի գերողանց փափկութիւն: Ի՞նչ դաս կարգ մը կաթողիկէներու որոց մէջ խիղճն այնչափ ըթացած է յաճախ, եւ որոց համար սրբարար չնորհաց կորուսար հոգերու ամենէն վերջինն է կարծես . . . :

ՀԵՐՄԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ր Ա Կ Ա Ն

Հ Ռ Ո Մ Ե Ի Կ Ա Յ Ո Ղ Ի Կ Է Ա Շ Խ Ա Ր Հ

Երջանկայիշատակ Կարգ. Գուլիէի տեղ Լիօնի Արքեպ. կարգուեցաւ Արհի. Սըվէն, Շալօնի Եպ. Ը: Պիոս Ժ. ամբողջ եկեղեցականութեան փափաքը լրացուց այս արժանաւոր անձնաւորութիւնը բարձրացնելով այս պատուոյ Արհի. Սըվէն վաթսուն տարեկան է. կորովամիտ, քաջուսումն, ճշմարիտ քահանայ եւ առաքելական հովիւ:

*. Ս. Քահանայապետն մեր Պիոս Ժ. երբ Կոստանդինուփի Մետիօլանու Հրքարտակին, այսինքն՝ Քրիստոնէութեան ազատագրութեան վեշտասանդարեան յիշատակութիւնը հրամայեց կատարել բովանդակ Կաթողիկէ տիեզերքի մէջ մեծաւ հանգիստաւորութեամբ, հրաման ըրած էր նաեւ յիշատակարան — տաճար մը կանգնել Միլէտոն կամուրջին մօտ ապագայ սերնդոց յիշեցնելու համար Կոստանդինուփի Ս. Խաչի օղնութեամբ տարած մեծ յաղթանակը ընդդէմ հեթանոսն Մաքսենտիոսի Կայսեր որ պարտուած՝ անկեղան թաւալեցաւ Տիբերիոսի ալիքներուն մէջ: Արդ այս տաճարին

(*) Elisabeth Seton, etc. pp, 255—6

առաջին հիմնաքարը զետեղելու արարողութիւնը կատարուեցաւ, Հոկտ. ի 18 ին, Վսեմ. կարգ. Գառաթիւթայի կողմանէ, մասնաւոր արարողութեամբ, և թաղուեցան նաև յիշատակգիր մագաղաթ մը և քահանայապետական միտայներ: Եւ եկեղեցւոյն ոճը հռոմէական Պաղիլիքաներունը պիտի ըլլայ, գրեթէ նման Ս. Լաւրենտիոսի արտաքոյ պարսպոց, պերճ միանդամայն և անսթիւքեթ, հին վեհութիւնը արտափայլեցնող. 53 մէգր երկայնքի վրայ պիտի ունենայ 30 լայնք: Ճակատը զարդարուած վեց կրանիտեայ սիւներով, մուտ պիտի տայ արտաքին դաւթի մը, ներսինը երեք սիւնաբաժիններ պիտի ունենայ: Գեղեցիկ զանգակատուն մը, հնազարեան ոճով, պիտի բարձրանայ տաճարին կողքը: Շինութիւնը տարուան մը մէջ պիտի աւարտի:

✱ Գաղղիոյ Մոյ քաղաքին մէջ Մեծին Պօսիւէի ի յիշատակ վճռուած տարեկան հանդիսութիւնք կատարուեցան Հոկտեմբերի 21-22ին, խուռն բազմութեան մը առջեւ, գիմած էին նաև գուրսի գաւառներէն խուռներամ հաւատացեալք: Կը նախագահէր Վսեմ. Երանաւորն Գալղիէր, ութանամեայ ծերունին, կորովի եւ եռանդանալից, որ և խօսեցաւ Պօսիւէի վրայ ներքողական ճառ մը, ի վեր հանելով անոր գլխաւոր նկարագիրները, ցուցնելով թէ նա սիրած էր ճշմարտութիւնը, հոգիները և հայրենիքը:

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐԲԱՐԱՆ

Հոկտ. 27ին, Կիրակի օրը, Արհի. Ստեփ. Եպ. Խորալէւեան ժամաներ է իր թեմը Խարբուլթ, ուր Կաթողիկէ ժողովուրդը մեծ խանդավառութեամբ ու սիրով փառաւոր ընդունելութիւն մը կատարեր է իր սիրեցեալ հովուին, որ ընտիր ընտիր օրհնութիւններ և յիշատակներ կը բերէր իրեն Վիեննայի համազգային Համաժողովէն: Բազմաթիւ ձիւնորներով եւ կառքերով դիմաւորեր են զինքն ի Խանդիւզ, շուրջ երեք ժամ հեռի քաղաքէն, ամբողջ կղերին ներկայութեամբ, իսկ հետինն ժողովուրդը անկից մինչեւ քաղաք շարան շարան կ'ընկերակցէր այս հանդիսաւոր թափօրին: Հոգեւորական արարողութեամբ մը աւարտեցաւ այդ տօնը:

✱ Կը տեղեկագրուի մեզ Սնկիւրիոյ թէ Գեր. Պօղոս վրդ. Տապանկեան վախճանած է 22 Նոյեմբերի ըստ Ն. Տ.: Հանգուցեալը ութսուն և չորս տարեկան էր, և ձեռնադրուած ի 16 Սեպտ. ի Հ. Տ. 1858ին, լուսոսհոգի Շիշմանեան Անտոն Եպիսկոպոսէն, ընկեր ունենալով իրեն Գեր. Յովհ. Թ. Մ. Վ. Օհանեանը: Ժամանակին շատ տարիներ առաքելութիւն ըրած է, մանաւանդ ի Պրուսա, Պիլէճիկ, Նիկոմիդիա: Արքական և գերազանցապէս երկիւղած վարքովը փառած է միշտ, առ հասարակ բարի օրինակ հանդիսանալով կղերին և ժողովրդեան: Քաջալերեալ Ս. Խորհրդովք Եկեղեցւոյ կնքեր է իր մահկանացուն՝ վստահ յուսով կենացն յաւիտենից, և բոլոր կղերի և բազմամբոս ժողովրդեան՝ ներկայութեամբ յուղարկաւորութիւնը կատարուեր է: Թաղուեր է Աթոռանիստ Ս. Աստուածածին Մայր-Եկեղեցւոյ փակին մէջ, — Հանգից է ի խաղաղութեան:

ԷԶՍԻԱԾՆԱԿԱՆ ՀԱՅԵՐ

Աթէնքէն ստիպողական հեռադրով ծանուցած են Գում-Գարուի Պատրիարքարանին թէ հարիւրաւոր գաղթական Հայեր իբրեւ թուրք լրտես ամբաստանուելով, ձերբակալուած և զրկուած են յունական իշխանութեանց կողմանէ: Արշարունի Պատրիարքը դիմումներ կատարեց ուր որ անկ է այս ձերբակալելոց ազատ արձակումը խնդրելու համար:

*. Իջմլածնի Կաթողիկոսը համադրալին մեծ տօնախմբութիւնը — այսինքն հայկական գրերու գիւտին 4500 ամեակը և հայ ապագրութեան 400 ամեակը — ըստ իւր քմաց իւրացուցած, մասնաւորած և դաւանաբանական ձեւի վերածած էր, ինչպէս իւր ժամանակին իրաւամբ զայս քննադատեց Հանգլէս Ամսօրեայ պարբերականը: Այս ալիւս անշան դարձած տօնական հանդէսը կանոնաւոր է Օշականի մէջ: Հայ պատմութեան համար բաւական խեղճ յիշատակ մըն ալ:

Ն Ե Ր Ք Ի Ն Գ Ո Ր Ծ Ե Ր

Շարժումս մէջ պատերազմի ընդհանուր նկարագիրը մեծ փոփոխութիւն չկրեց արեւելեան Մակեդոնիոյ մէջ: Ետինէն հզօրեղապէս կը դիմագրէ պուլկարական պաշարող բանակին, մերթ քնդ մերթ անախկալ յարձակումներ ընելով դուրս և ծանր կորուստներով հարուածելով թշնամին. կ'ըսեն թէ Ետինէի պաշտպանութիւնը ընդհանուր գիծերովը, երկրորդ Բլէֆա մը եղաւ, օսմ. Պատմութեան էջերը պանծանօք զարդարելիք: Իսկ օսմ. բանակը Չաթալճայի մէջ ամրացաւ. 25 քիլօմէթր հեռաւութեամբ դիմացն ունենալով պուլկար բանակը: Սակայն ուրախալի լուր մը ստուգապէս կ'աւետուի թէ արդէն հաշտութեանց բանակցութիւնները սկսելու վրայ են, որով այս օրերս պիտի կնքուի զինադադար և պատերազմի և ուրիշ վտանքն կ'անհետանայ:

*. Կ'ըսուի թէ հեյլէնները Նոյմ. Տին Ն. Տ. գրաւած են Ալեքսիքը, Այ Տիմիթրիի տօնին օրը, որ նոյն քաղաքին հանդիսաւոր տօնախմբութեան օրն ըլլալով, խանդավառ ցոյցեր, ուխտագնացութիւն և մաղթանքներ կատարուէր են:

*. Հետզհետէ օտար մարտանաւեր կը հասնին ի Կ. Պոլիս. ասոնց թիւը մինչեւ ցայսօր հասած է 14ի: Այս մարտանաւերու խումբին ընդհանուր հրամանատար և գաղղիական Լէօն Կամպէրքա զրահապատ յածանաւին ծովակալ Տարթիֆ տը Յուռնէի նախագահութեան տակ նիստ գումարեցին բոլոր ծովականները և Պալոյ ապահովութեան մասին իրենց ձեռք առնելիք միջոցներուն վրայ խորհրդակցութիւններ կատարեցին:

*. Տարտանէլի նեղուցին մօտ Պէշիքայի ծոցին մէջ Անգլիական 46 մարտանաւեր խարսխած են:

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Ն Ո Ւ Թ Ի Ի Ն

Տէր Կոմիտաս Բահանայ	641
Ուղերձ առ Ամեն. Հոգեւոր Տէր	647
Ս. Հաղորդ. Համագգ. Համաժողով ի Վիեննա	649
Նդիսաբեթ Սիբրն	652
Տեղեկագրական	654

ԱՐՏՕՆԱՏԵՐ

ՅՈՎԼ. Ծ. Վ. ԿԵՏԻԿԱՆ



ՏՆՕՐԷՆ-ԽՄԱՍԻՐԱՊԵՏ

ԳԷՈՐԳ Ծ. ՎԱՐԳ. ԹԷՐԶԻՊԱՇԵԱՆ

Տպագր. Արձագանգ Շաբարաբեթի, Բերա, Պալատ փողոց քիւ 5 Կ. Պոլիս

Թերթիս երկրորդ տարին պիտի աւարտի յառաջիկայ Դեկտեմբեր 31ին, ու երրորդ տարւոյն պիտի թեւակոխէ 1913 Յունուար 1ին, աւելի խնամուած եւ աւելի հոխ բովանդակութեամբ:

Բաժանորդագրութեան պայմաններն ամփոփոխ կը մնան. հետեւապէս կը հրաւիրենք փոփախողներ որ փութան բաժանորդ գրուիլ մինչեւ ց1 Յունուար: Իսկ անոնք որ արդէն գրուած են, իրենց պայմանաժամը չլրացած կը պարտին նորոգել իրենց բաժանորդութիւնը:

Պատեն առիթ կը ներկայանայ մեզ հրապարակաւ յայտնելու մեր խորին շնորհակալիքն ամէն այն բարեսցակամ անձերու, որոնք այս տարուան շրջանին մէջ հանեցան գրուոր թէ բերանացի թերթիս նկատմամբ իրենց դուստալից գոհունակութիւնն, խնդակցութիւնը եւ նոյնին շարունակութեան համար խրախոյս եւ մաղթանքներ յայտնել: Կը վստահացնենք զիրենք որ բնաւ պիտի չխնայուի ու եւ իցէ գոհողութիւն՝ այս գերազանցապէս լուրջ եւ հաստատ կաթողիկէ սկզբունքներու ծառայող թերթս միշտ աւելի օգտակար ընծայելու մեր փրելի հասարակութեան: Կը խնդրուի փոխադարձաբար մէն մի նշմարիտ կաթողիկէ անհատ իւրովսնն աշխատիլ *Արձագանցի* ծաւալումին:

Հրատարակուեցաւ «Տարրական սկզբունք Բիսոնեական Վարդապետութեան, փոքրիկ տղայոց համար, հաստատեալ Հոգեւոր իշխանութենէ եւ կիրառութիւնը հրամայեալ Հայ-Կաթողիկէ հասարակութեանն ամեն դպրոցներուն մէջ»: Կցուած են առօրեայ հարկաւոր քաղաքներ: Բաղկացած է 136 էջէրէ:

Բովանդակութեան լուրջ, սեղմեալ եւ պարզ ոնոյն շնորհիւ դպրոցականներու ամենեւն օգտակար եւ յանձնարարելի զբոյլ մըն է անհրաժեշտ:

Գինը անհամեմատ կերպով աժան է. ամուր քողակազմը՝ 2 դանեկան միայն:

Դիմել՝ Կ. Պոլիս, Բերա, Պայրամ փողոց թիւ 5:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Քոռիկոյ համար	Տարեկան	Դնիկ. արծ.	40
	Վեցամսեայ	» »	20
Ներսասնական	Տարեկան	Չրակք	40
	Վեցամսեայ	»	5

Բաժանորդագրութիւնք կանխիկ կը վճարուի՝ Սանսա Բոսով
եւ կամ մէյ մէկ դրուցնոց նամակադրոճով

Մէկ թիւ 1 Դաշեկան

Նամակ, յօդուած եւն. կը լրկուին հաւագրութեան հասցէին

Կ Ա Ք Ո Ղ Ի Կ Է Ա Ր Չ Ս Դ Ա Ն Դ

Բերա, Պայրամ փողոց թիւ 5

Կ. Պոլիս

KATOGHICHE ARZAKANK

Pera, 5 Rue Baïram 5

Constantinople

- ԾԱՆՈԹ.**— 1.— Աւագանց կը նրաստակուի Շաքար օրերը:
- 2.— Խմբագրութիւնս պատրաստեալ չէ անպատշաճ կամ նոյնութեամբ նրաստակել իրեն զրկուած չ եւ է յօդուած:
- 3.— Կեղծանունով զրկուած յօդուածներու ներկանկար կը պարտի իր իսկական անունը ծանուցանել Խմբագրապետին:
- 4.— Չեռագիրներ եւ չեն դարձուիլ:
- 5.— Յօդուածներու ձեռագիրները պէտք է գրուած լլրան թուոյրին մէկ կողմը միայն:
- 6.— Ծանուցանց համար մասնաւոր պայմանագրութիւնք կը կատարուին:
- 7.— Հասցէի փոփոխութեան համար պէտք է անհրաժեշտ երկու դանկանի նամակադրոճ ի միասին զրկել: